ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«30» նոյեմբերի 2017թ No 3398-Ա

# ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 29, 42 ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ԹԻՎ 38 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը, ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը

Ընդհանուր եւ արտաքին կապերի բաժին
N 11498 30 NOV 2017 ժամ 15.25
Կից [ ] Դեպի կարգավիճակ
Նշումներ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Հակոբ Թոփչյանին՝

1) ապահովել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12-ի «Բժշկական արտադրատեսակների կլինիկա-լաբորատոր փորձարկումների (հետազոտությունների) անցկացման կանոնների մասին» թիվ 29, «Գրանցման ժամանակ չափման միջոցների շարքին դասվող բժշկական արտադրատեսակների ցանկը հաստատելու մասին» թիվ 42 և 2016 թվականի մայիսի 16-ի «Բժշկական արտադրատեսակների կենսաբանական ազդեցությունը գնահատելու նպատակով հետազոտությունների (փորձարկումների) անցկացման կանոնները հաստատելու մասին» թիվ 38 որոշումների կիրարկումը:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին:

30.11.17 ժ.14.45

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ